ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ջեռուցման համակարգերի ապամոնտաժման և մոնտաժման աշխատանքների կատարման 23.11.2020թ. կնքված ԵՁՀԴ-ՄԱԱՇՁԲ-20/2 պայմանագրի լուծման վերաբերյալ

ք.Երևան **25.11.2020թ.**

«Ե.Չարենցի անվան Հ.67 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ն (այսուհետև՝ Գնորդ), ի դեմս տնօրեն Ա.Խեչումյանի, մի կողմից, և «Թերմո-Ֆիթ» ՍՊԸ-ն (այսուհետև՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ստեփան Միհրանյանի մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը համաձայնվում են Ջեռուցման համակարգերի ապամոնտաժման և մոնտաժման աշխատանքների կատարման 23.11.2020թ. կնքված ԵՁՀԴ-ՄԱԱՇՁԲ-20/2 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 6-րդ կետով (ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ/ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ) սահմանել՝ սույն պայմանագիրը լուծելու վերաբերյալ համաձայնագիր, որը պայմանավորված է անհաղթահարելի ուժի ազդեցությամբ, քանի որ կազմակերպության տնօրինությունը և հիմնական աշխատակազմը ովքեր պետք է իրականացնեն պայմանագրով սահմանված աշխատանքները վարակված են COVID-19 հիվանդությամբ, որը անհնարին է դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը սահմանված ժամկետներում: Այդ իսկ պատճառով կնքվում է համաձայնագիր պայմանագիրը լուծելու վերաբերյալ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և համարվում է ջեռուցման համակարգերի ապամոնտաժման և մոնտաժման աշխատանքների կատարման 23.11.2020թ. կնքված ԵՁՀԴ-ՄԱԱՇՁԲ-20/2 պայմանագրի անբաժանելի մաս:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն համաձայնագրով Պայմանագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
«Ե.Չարենցի անվան հ.67	<<ԹԵՐՄՈ-ՖԻԹ>> ՍՊԸ
հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ք. Երևան. Կոմիտաս
ՀՀ ք.Երևան,Ամիրյան 9	45/1-91
ՀՎՀՀ 02527006	Հայէկոնոմբանկ"ԲԲԸ
Թիվ 1 ՏԳԲ	Հ/Հ 163058806858
Հ/Հ 900018004409	ՀՎՀՀ՝ 00169933
Տնօրեն՝Ա.Խեչումյան	տնօրեն՝ Ս.Միհրանյան
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)